Հաստատում եմ՝
«Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի
կառավարման խորհրդի նախագահ
---------- Է. Գրիգորյան
25.01.---------- 2021թ.

ԱՊԷՔ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (այսուհետ՝ ԱՊԷՔ կամ քոլեջ) որակի ապահովման քաղաքականությունը սահմանում է ԱՊԷՔ-ում որակի ապահովման գործընթացների իրականացման սկզբունքները, ուղենիշները և ընթացակարգերը:

Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի 2018-2023թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը սահամանել է այն հիմնական ուղղությունները, որոնց հետևելու է Քոլեջը երկարաժամկետ հեռանկարում՝ իր առաքելությունը և հիմնական ռազմավարական նպատակներն իրականացնելու համար՝ տրամադրելով որակյալ կրթություն, որը կնպաստի միջին մասնագիտական կրթությամբ որկյալ մասնագետների պատրաստմանը և հնարավորություն կտա ուսումը շարունակելու բարձրագույն ուսումնական հաստատություններում:

ԱՊԷՔ որակի ապահովման քաղաքականությունը բխում է ԱՊԷՔ առաքելությունից և պետք է նպաստի ԱՊԷՔ ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացմանը, ԱՊԷՔ-ում մասնագիտական կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների համապատասխանությանը, սովորողի համար սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը, մատուցվող կրթության համապատասխանությունը ՈԱՇ-ին, գործունեության արդյունավետության բարձրացմանը:

ԱՊԷՔ որակի ապահովման քաղաքականության նպատակներն են՝

- ✓ երաշխավորել բարձր չափանիշների պահպանումը ԱՊԷՔ գործունեության հիմնական ոլորտներում,

- ✓ խթանել կրթության որակի շարունակական բարելավումը և որակի մշակույթի զարգացումը Քոլեջում,
- ✓ ստեղծել կանոնակարգային և կազմակերպական հենք՝ ԱՊԷՔ-ի և նրա կրթական ծրագրի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար, հաստատել կապ որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև,
- ✓ հստակ մեխանիզմների միջոցով քոլեջի որակի շարունակական բարելավման ապահովումը՝ ուղղված ԱՊԷՔ առաքելության իրականացմանը:

Այս ամենի համար անհրաժեշտ են հետևյալ գործողությունները՝

- ✓ Պլանավորում՝ խնդիրների սահմանում, հնարավոր լուծումների ձևակերպում,
- ✓ Իրականացում՝ սահմանված պլանի հիման վրա միջոցառումների իրականացում,
- ✓ Գնահատում՝ իրականացված գործողությունների ընթացիկ գնահատում,
- ✓ Բարելավում՝ արդյունքների ամփափում և հետագա քայլերի վերանայում:

Սահմանված նպատակներից բխում են ԱՊԷՔ ՈԱ համակարգի հետևյալ խնդիրները՝

- ➢ համակարգված գործընթացների միջոցով աջակցել կրթական չափորոշիչների պահպանմանը, կրթական ծրագրերի ՈԱ-ը և շարունակական բարելավմանը,
- ➢ շարունակաբար բարելավել և արդիականացնել որակի ապահովման համակարգը, մեխանիզմները, գործիքները, ընթացակարգերը և որակի ապահովմանն առնչվող այլ փաստաթղթեր:
- ➢ շարունակական բարելավել որակի ապահովման, մշտադիտարկման և բարելավման գործիքակազմը,
- ➢ ՈԱ համար նախատեսել հաշվետվողականության ընթացակարգեր և նախաձեռնել համապատասխան գործընթացներ,
- ➢ իրականացնել Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների և կրթական ծրագրերի ինքնավերլուծության և ինքնագնահատման կազմակերպում,
- ➢ շարունակաբար բարելավել կրթական ծրագրերի որակը և բովանդակությունը, փորձելով կրթական ծրագրերը և դրանցում

սահմանված վերջնարդյունքները համապատասխանեցնել աշխատաշուկայի, գործատուների պահանջներին,

- հետամոտ լինել ԱՊԷՔ առաքելության իրականացմանը՝ նրա տեսլականին, ռազմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխան:

ԱՊԷՔ ՈԱ քաղաքականության հիմքում դրված հիմնարար սկզբունքներն են.

1. որակի գերակայություն,
2. հաշվետվողականություն,
3. օբյեկտիվություն,
4. համակարգային մոտցում,
5. գործունեության կանոնակարգում,
6. շարունակական բարելավում,
7. արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածություն,
8. ինքնագնահատում

ՈՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՊԷՔ-ում որակի ներքին ապահովման գործընթացները ուղղված են քոլեջում որակի մշակույթի ձևավորմանը և զարգացմանը:

Որակի մշակույթը ոչ միայն որակի ապահովման պատասխանատուների, այլև ԱՊԷՔ բոլոր աշխատակիցների պատասխանատվությունն է և յուրաքանչյուր ստորաբաժանում անմիջական պատասխանատվություն է կրում իր կատարած աշխատանքի որակի համար:

Որակի մշակույթի ձևավորումը իրենից ենթադրում է առաքելության և գերակա նպատակների, կարողությունների պարբերաբար ինքնավերլուծության իրականացում, աշխատանքում բարձր պատասխանատվության, ուսանողակենտրոն սկզբունքի արմատավորում և հետադարձ կապի ապահովում:

ԱՊԷՔ որակի ապահովման քաղաքականությունը միտված է քոլեջում որակի մշակույթ ձևավորմանը, որը պետք է ներառի՝

- սրտացավ վերաբերմունք որակի նկատմամբ,
- ակտիվ գործունեություն,

- կանոնակարգված գործունեություն՝ հստակ ընթացակարգերով և դրանց հետևողական իրականացմամբ,
- արտաքի և ներքին շահակիցների ներգրավվածություն,
- լավագույն փորձի բացահայտում և տարածում:

ԱՊԷՔ որակի ապահովման հիմնական ոլորտները

ԱՊԷՔ ՈԱ համակարգում ներառված գործընթացները, մեխանիզմները, չափորոշիչները ու ընթացակարգերը պետք է հնարավորություն ընձեռնեն իրականացնելու որակի գնահատում հետևյալ ուղղություններով.

1. **Մասնագիտական կրթական ծրագրեր.**
   - ✓ ՄԿԾ-ի համապատասխանեցումը ՈԱՇ-ին,
   - ✓ ՄԿԾ-ի, ուսումնական պլանների, պրակտիկաների, ամփոփիչ ատեստավորման և ուսումնական այլ գործունեության պլանավորում, ինչպես նաև մշտադիտարկման և գնահատման գործընթացներում ԱՊԷՔ արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածության ապահովում,
   - ✓ դասընթացների, ծրագրերի, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդների բավարարվածության վերաբերյալ շահակիցներին պարբերական հարցումների իրականացում:
2. **Վարչարարություն.**
   - ✓ Մշակված փաստաթղթերով կանոնակարգված գործունեություն ապահովող կառավարման իրականացում:
3. **Դասախոսական կազմ.**
   - ✓ ԱՊԷՔ դասախոսական կազմի որակի գնահատումը՝ ուսանողական հարցումների և դասալսումների միջոցով,
   - ✓ Դասախոսական կազմի մասնագիտական և այլ բնույթի վերապատրաստումների պլանավորում և իրականացում:
4. **Ռեսուրսներ և ենթակառուցվածք**

Ռեսուրսների և ենթակառուցվածքների որակի գնահատումը ներառում է լսարանների, գրադարանի, ընթերցասրահի, տեղեկատվական հաղորդակցման

միջոցների, ուսումնական կաբինետների ու համապատասխան սարքավորումների առկայության և համարժեքության չափում:

5. **Որակի ներքին ապահովում.**
   - ✓ որակի ապահովման քաղաքականության իրականացում,
   - ✓ որակի գնահատման և ապահովման ընթացակարգերի, մեխանիզմների, գործիքների մշակում և իրականացում,
   - ✓ ԱՊԷՔ-ում որակի մշակույթի ձևավորում:

ԱՊԷՔ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԱՊԷՔ ՈԱ համակարգում ներգրավված հիմնական ստորաբաժանումներն ու կառույցները և նրանց միջև պատասխանատվությունների բաշխումը ունի հետևյալ հիերարխիկ կառուցվածքը.



Որակի ապահովման գործնթացում ներգրավված ստորաբաժանումները և միավորները ունեն հետևյալ գործառնությունները ԱՊԷՔ-ի որակի ապահովման գործընթացում.

ԱՊԷՔ կառավարման խորհուրդ.

- որակի ապահովան քաղաքականության, աշխատանքային կանոնակարգի և ընթացակարգերի, որակի ապահովման ռազմավարության հաստատում,
- ԱՊԷՔ տարեկան հաշվետվությունների շրջանակներում որակի ապահովման գործընթացների արդյունքների քննարկում և բարելավման ուղղությունների առաջադրում:

Տնօրեն.

- ղեկավարում է ԱՊԷՔ ՈԱ քաղաքականությունը և ՈԱ ռազմավարության մշակման աշխատանքները, ուղղորդում դրանց իրականացումը, ինտեգրումը և փոխգործակցությունը ԱՊԷՔ այլ ստորաբաժանումների հետ,
- կառավարում է ԱՊԷՔ-ի ինքնավերլուծության գործընթացը:

Ուսումնական գծով փոխտնօրեն.

- իր ենթակայության տակ գտնվող առարկայական հան որակի ապահովման գործընթացներին ներգրավվածություն, ներդաշնակ փոխգործակցության ապահովում:

Որակի ապահովման բաժին.

- կազմակերպում և իրականացնում է ԱՊԷՔ ինքնավերլուծության գործընթացը, ինքնավերլուծության զեկույցի պատրաստումը,
- ապահովում է կրթական ծրագրերի մշակման և իրականացման հսկողությունը և ստուգում դրանց համապատասխանությունը սահմանված չափանիշներին,
- կրթության որակի ապահովման գործընթացի մասնակիցների աշխատանքային խմբերի ձևավորում և դրանց աշխատանքի համակարգում,
- կառուցվածքային ստորաբաժանումներին որակի ապահովման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,
- գնահատում է դասխոսական կազմի ուսումնամեթոդական գործունեությունը և դրա արդյունավետությունը,

- պատասխանատու է դասավանդման և ուսումնառության որակի գնահատման գործիքակազմի (ուսանողական հարցումներ) մշակման համար:

ԱՊԷՔ-ի աշխատանքային խումբ (ձևավորվում է հավատարմագրման գործընթացը կազմակերպելու և իրականացնելու համար).

- ✓ ԱՊԷՔ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացի շրջանակներում տեղեկատվության հավաքագրում, համադրում և վերլուծություն,
- ✓ ԱՊԷՔ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գորընթացի իրակնացման մասնակցություն:

ԱՊԷՔ փորձագիտական խումբ.

ԱՊԷՔ գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ մեթոդական և նորմատիվային մեխանիզմների մշակում, իրագործում և գնահատում:

ԱՊԷՔ առարկայական հանձնաժողովներ.

- ✓ կազմակերպում են ֆակուլտետի կրթական ծրագրերի մշակման, իրականացման, ընթացիկ մշտադիտարկման ու պարբերական վերանայման գործընթացները,
- ✓ դասալսումների միջոցով ԱՊԷՔ դասախոսական կազմի և դասընթացների որակի գնահատում, այդ թվում՝ դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդները,
- ✓ ցիկլերի գործունեության ինքնավերլուծություն, զեկույցի կազմում և ներկայացում, պարբերաբար մոնիտորինգների իրականացում և անհրաժեշտության դեպքում մեխանիզմների և ընթացակարգերի վերանայում՝ որակի շարունակական բարելավման համար:

ԱՊԷՔ սովորողներ.

- ✓ ընդգրկված են ԱՊԷՔ կառավարման խորհրդում՝ մասնակցելով որոշումների կայաղմանը, նախագծերի քննարկմանը և հաստատմանը,
- ✓ որպես ուսանողական խորհրդի ներկայացուցիչներ՝ մասնակցում են ԱՊԷՔ որակի ապահովման գործընթացներին,
- ✓ մասնակցում են դասավանդման, ուսումնառության և գնահատման արդյունավետության հարցումներին:

Արտաքին գնահատողներ (փորձագետներ, շրջանավարտներ, գործատուներ և այլն).

- ✓ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների շրջանակներում ԱՊԷՔ գործունեության, որակի ներքին ապահովման համակարգի և կրթական ծրագրերի արտաքին փորձաքննության իրականացում,
- ✓ շրջանավարտների ավարտական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկվածություն,
- ✓ ԱՊԷՔ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումների մասնակցություն,
- ✓ ԱՊԷՔ շրջանավարտներից գործատուների բավարարվածության հարցումների մասնակցություն: